կարդութենէ աստի խառնաձայն աղաղակն հնչէր զգիշերն ողջոյն։ Եւ իբրեւ յանձն առին միաբանք տալ զոր պահանջէին, եհաս այլ իմն հրաման 'ի Բդեշխէն, և խընդրէին յուխտաւորացն Հայոց զ10,000 դահեկան գլխահարկ, որ խափանեալ էր յառաջագոյն, և իբրեւ մատուցին ըզհրովարտակն նորին, զայն եւս ոչ ընկալան, և 'ի սադրելոյ այլազգեաց՝ յանձն առին վճարել և զայն, բայց զամենեսին փոխանակագրով 'ի Կոստանդինուպօլիս։ Իսկ եթէ ոչ հաճեսցի ընդ այն Բդեշխն, տարեալ ընկեսցեն 'ի դատարան զփականս վանաց և ինքեանք մեկնեսցին յԵրուսաղէմ։ Ահա այս է ասեն վիճակ մեր նամակագիրքն, (1827։ 'ի 21 Մարտի։ յ8 Ապրիլի)։

Տաղտկացեալ էին երեք Խորհրդականք Աթոռոյն յերեսաց բռնաւորաց և պարտատերաց և գրելոյ 'ի Կոստանդինուպօլիս, և խնդրելոյ այցելութիւն և օգնութիւն, և ոչ գտանելոյ։ առաւել տագնապէին յորժամ յետս դառնային փոխանակագիրք պարտուց։ Կամէին փակել խսպառ զդուռն վանաց եւ խոյս տալ անտի խմբովին, բայց զայն եւս ոչ կարէին, զի ընդդէմ դառնային նոցա այլազգիք և պարտատերք։ Զայրանային 'ի վերայ փոխանորդ Զաքարիա վարդապետի՝ և մեղադրէին զնա, որպէս թէ ըզտառապանս իւրեանց ոչ յայտնէր գլխաւորաց ազգին։ Զի թերեւս ոմանք 'ի նոցանէ 'ի գութ շարժեսցին 'ի վերայ Աթոռոյն և մի լիցի կործանումն չար։ այլ միայն ինքն ընթերցեալ զնամականիս նոցին՝ և ըստ ախորժակաց իւրոց գրէ զպատասխանիս, ուստի յայս նուագ եւս ասեն յետս դարձին փոլիցայքն։ դադարեսցին գրութիւնք մեր առ քեզ։ Գրեսցուք առ բեռնակիրս, առ աղքատս և առ այլ աշխատաւորս ազգին մայրաքաղաքիդ, եւ այլ և այլ քաղաքս։ զի նոքա ծանուսցեն քեզ զարժանն։ Յետ այնորիկ գրեցին դարձեալ զչարիս զօրաց զոր գործեցին 'ի վանս, սակս 6000 դահեկանի Ղափարի Ս։ Յարութեան, թէ որպէս յարձակեցան 'ի սենեակ Թարգմանին և չգտեալ զնա անդ՝ ելին 'ի Խորհրդարանն, խորտակել զդուռն, զքարշել երկրորդ Թարգմանին այսր և անդր սակս դարմանի երիվարաց, տապարաւ հարկանել զերկաթեայ դրունս եկեղեցւոյ, զի աւարի առցեն զայն, խոշտանգել զվանականն,